## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

### *կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին*

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված բաց ընթացակարգի արդյունքում 2010 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N ԾՁԲ-10/60 ծածկագրով պայմանագրում 2017 թվականի հունիսի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| *Փոփոխության առաջացման պատճառ -* | Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում: |
| *Փոփոխության նկարագրություն-* | ՀՀ Կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 448-Ն որոշմամբ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման N ԾՁԲ-10/60 ծածկագրով պայմանագրի կատարման համար հատկացվել է ֆինանսական միջոց, որի հիման վրա պայմանագրի 7.3 կետի համաձայն կնքվել է համաձայնագիր: |
| *Փոփոխության հիմնավորում-* | ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպմա կարգի>> 60-րդ կետ: |

Պատվիրատու՝ ***ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե***

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 9

**06.09.2010 թ. կնքված N ԾՁԲ-10/60 պայմանագրի**

**ք.Երևան** <<20>> 06 2017 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 448-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ի միջև 06.09.2010թ. կնքված՝ ծառայության մատուցման N ԾՁԲ-10/60 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Ավելացնել 11.04.2017թ. կնքված N 8 համաձայնագրի գինը 617 200 (վեց հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր)՝ ՀՀ դրամով:

1.1.2 N 8 համաձայնագրի 1.1.1 կետում նշված <<984 250 (ինը հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ>> բառերը փոխարինել <<1 601 450 (մեկ միլիոն վեց հարյուր մեկ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ>> բառերով:

1.1.3 N 8 համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելված թիվ 1-ը փոխարինել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը սահմանող հավելված N 1-ով:

### 2.Այլ պայմաններ

2.1 Սույն ամաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 06.09.2010թ. կնքված N ԾՁԲ-10/60 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի N 1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

ՀՀ Կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
Ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012714
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան ________
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ ա տ ա ր ո ղ**

<<Բագարանի Բարիք>> ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
<< Հայբիզնեսբանկ >> ՓԲԸ
<< Կիլյան >> մասնաճյուղ
Հ/Հ 11500498836200
ՀՎՀՀ 02235628

Տնօրեն՝

Ս. Մարգարյան ________
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 1*
*06.09.2010թ. կնքված N ԾՁԲ-10/60*
*ծածկագրով գնման պայմանագրի*
*N 9 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(Բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 06)

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | 49 200 | 246 100 | 246 100 | 246 100 | 1 257 000 | 1 257 000 | 1 257 000 | 1 601 450 | 1 601 450 | 1 601 450 | 1 601 450 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**Պ ա տ վ ի ր ա տ ու**
ՀՀ Կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
Ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012714
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար՝
Ա. Մկրտչյան ________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ ա տ ա ր ո ղ**
<<Բագարանի Բարիք>> ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
<< Հայբիզնեսբանկ >> ՓԲԸ
<< Կիլյան >> մասնաճյուղ
Հ/Հ 11500498836200
ՀՎՀՀ 02235628
Տնօրեն՝
Ս. Մարգարյան ________
(ստորագրություն)
Կ.Տ.